

դէն ին էն էրկուս. էսունք դէսն զաւթած, էսունք դէն ին զաւթած:

Էլաւ, զիւր ձին խեծաւ, բշից, կինաց, կինաց, Մսրայ քեազաք դէն ընցաւ. ընցաւ դէն, կինաց, տեսաւ, որ էդ էրկու սըդէն էլած քեառսուն դեւի խիտ ինգիր, իրանց խեծնելու ձին էլ դաւայ ի: Վինաց էնդեղ, էդ քեառսուն՝ ւերկու յէոջիւ ՄՏերին էկան. բարիւ խոու, — բարիւ առին:

Բարիւ առնիրու յիտիւ ասին. — Մինք քեառսուն՝ ւերկու ինք, ախպէր ինք. տիւն էլ ըլնիս մի ախպէր, ըլնինք քեառսուն՝ ւիրիք ախպէր:

Էսաց. — Իս կ'ըլնիմ ձի խիտ ախպէր, Տամա, էսաց, ձե ազգ սրտեղաց ի:

— Էսաց. — Մի ազգ, որ կայ՝ Հալաբայ ի, Հալաբայ քեաղբը թագաւորը թռոնիրն ինք:

Էսաց. — Ի՞նչու արա քեաղաք չէք նստը:

Էսաց. — Մեզի մէկ քիւր կայ քեաղաք, էն քիւր զմի ճամբախի ի, էսա տիղ նստիր ինք, մի քիւր թագաւորութիւն կ'էնը:

Էսաց. — Տիւ կ'կէք, ընձը շանք տէք, տեսնամ ի՞նչ տարղ քիւրը, որ թագաւորութիւն կ'էնը:

Էլան, քեառսուն իրիքեով էլ կեացին դեախ իրանց քիւր. էլան, կեացին, ճամբախ կէս էլաւ. Վուզբաղնը ազգական էրկու փալիւան կէն խատ քեառսուն դիւիրուն, էլան, չոկուան, ասին.

— Մինք չինք իկեայ:

Էլան, կեացին, Հալաբայ քեաղաք խասան ՄՏեր, քեառսուն դե. տեսան, որ մարդ չկայ քեաղաք, ինսան չկայ, աւի՛ր:

— Եարաբ¹⁾ էս ի՞նչ թագաւորութիւնը, որ մարդ չկայ, էսաց. կինաց մտաւ մէկ օթախը մէչ, տեսաւ, որ քեառսուն կանթիւն պղինձ ըմ կայ էդա տեղ:

1) Արդեօք: